Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3540

281.6
Ц-48

1906

2018

ՀԱՄԱՌՕՏ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

26

ՅՕՐԻՆԵԱՑ

ԳԵՐ· ԳԵՐՅ· ԱՆԴՐԷԱՍ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ
ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ
ՄԵԾԱՒՈՐ ՎԱՆԱՑ Փ· Կ· ՋՄՄԱՌԻ

Բ 2001

ՎԵՆԵՏԻԿ — Ս· ՂԱԶԱՐ
1906

281·6
Ա-48

286.6
Ա-48

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ᄆᄂ

2316
Ա-48

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՅՕՐԻՆԵԱՑ

ԳԵՐ· ԳԵՐՑ· ԱՆԴՐԷԱՍ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ

ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ

ՄԵԾԱՒՈՐ ՎԱՆԱՑ Փ· Կ· ՋՄՄԱՌԻ

ՎԵՆԵՏԻԿ — Ս· ՂԱԶԱՐ

1906

Ֆ-3 064-սպ
ՀԱՅ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ան
им. А. Мясникяна
3518-67

ԶԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ԿԱՄ

ԶՎԻՃԱԿԱՑ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ի ծանօթութիւնսն, որ զՊատրիարքաց Կիլիկիոյ յամսն 1740–1904. յաւելուլ ի դէպ է և բանս ինչ համառօտ զվիճակաց՝ որ ի նմին Պատրիարքութեան։

Թէպէտ զբազմաց ի նոցանէ վաղ իսկ պատրաստեալ էր ծանօթութիւնս ընդարձակ ևս, այլ առ ժամս շատանամ համառօտիւս. թողեալ այլում պատեհի զայն։

Վեշտասան են արդ Աթոռք, յորոց մին Պատրիարքական. զտանին և այլ ևս տեղիք կցեալք Պատրիարքական Աթոռոյն, առ ժամն, կամ ընդ միշտ։

Հինգ վիճակք կան յարևելից Եփրատայ, մինչև ցեզերս արևելից Օսմանեան Պետութեան։ Վեց այլ ի միջոցին, չորս դէպ յարևմուտս, և մի ընդ հարաւ Եգիպտոս։

Բազումք ի վիճակացդ կանգնեալ են ի վաղ ժամանակաց. այլ չեն ինձ վասն եղանել անդր քան զդարն ԺԸ. Թէպէտև բազումք յԵպիսկոպոսարանացդ իցեն յառաջագոյն, և անկեալ ընդ բազում արկածիւք ժամանակաց։

Ա.

ՎԻՃԱԿ ՄԱՐՏԻՆԻ

Յարևելեան Եպիսկոպոսարանան, Մարտինի Աթոռն կանգնեցաւ վերստին յամին 1708. երեսուն և ութ ամօք յառաջ քան զընտրութիւն Աբրահամու Պետրոսի Ա. Պատրիարքի. և երրորդն ի յաջորդաց նորա ձեռնադրութիւն առնոյր յԱբրահամ Աբքեպիսկոպոսէ Բերիոյ և ընդ այլ Եպիսկոպոսաց մտանէր յընտրութիւն նոր Պատրիարքի։ Յաջորդութիւն Աթոռոյս տևէ ցայսօր ժամանակի, որ և ի սկզբանէ անտի պատուական է յորջորջմամբ Աբքեպիսկոպոսի։

Մարտին Սանճագ է Վիլայէթին Տիարպէքիրի ի Միջագետս, այս գաւառ ի հնումն կոչէր Միգդոնիա, և գլխաւոր քաղաք էր նորա Մծբին, որ աւան փոքր է այժմ. և Մարտին վայելէ զառաջնութիւնն։ Բնակք գաւառիս Քուրդք են մեծաւ մասամբ. ապա Ասորի Եաղուապիք, յորս սակաւ են թուով կաթողիկեայքն։ Հայք ի Մարտին քաղաքի առ հասարակ զկաթողիկեայ ունին դաւանութիւն, որպէս որք ենն ի Թէլ-Էրմէն։ Կան ևս կաթողիկեայք ի Տէրիկ, ուր առաւել են թուով որք չենն միաբան և ի Ռաս-էլ-Այն ի Վերան-Շէհր, նաև ի գիւղօրէս՝ Աւինէք, Գըրք-տիրէք և այլուր ևս։ Ի նոյն գեօղս և յաւէտ ի հիւսիսոյ վիճակին կան և էջմիածնականք իբր 25,000, ի բովանդակ վիճակին այլ չէ ճիշդ թիւդ այդ. և ոչ որոշակի ծանօթ։

Հասարակաց է բան, եթէ Հայք հետևէին բաժանեալ մասին. թէև չէ մարթ հաւաստել զամենայն ասացեալս, որոց չիցեն հմուտ լիուլի պատմութեան մերոյ։ Ի Յովհաննէս Մկրտչէ ի Քաբուչին կրօնաւորէ Սինթումենցւոյ առաքեցաւ ի Հռովմ պատանին Թասպաս ի դպրոցն Ուրբանեան, որ ձեռնադրեցաւ քահանայ, և դարձեալ ի Հայրենիս իւր միաբանեաց զժողովուրդ տեղւոյն ի միաբանութիւն ընդ Հռովմէական եկեղեցւոյ. մանաւանդ յետ Եպիսկոպոսութեան իւրոյ զամենայն Հայս Մարտինի, Թէլ-Էրմէնայ և այլոց տեղեաց, ընդ որս՝ յետ ժամանակի միացան և այլք ի Տարա, ի Մծբին և յայլսն։

Բաց ի Սանճազէն Մարտինի, և որք բնակեալ են Հայք ի սահմանս Ասորեստանի ի Մուսուլ, ընդ ձեռամբ են Հովսէփ Մարտինի։ Իսկ գաւառք Պաղտատի և Պասրայ՝ մինչև ցնոր կարգադրութիւն՝ տնօրինին Պատրիարքական Գործակալութեամբ։

Յեպիսկոպոսունս Մարտինի՝ առաջին եղև ի սկիզբն ԺԸ. դարուն Մելգոն Ա. Թասպաս ծնեալ ի Մարտին, որ ձեռնադրեցաւ Եպիսկոպոս ի Պետրոս Պիսակ կաթողիկոսէ Սսոյ յամին 1708 և յետ զամս ութ վարելոյ զեկեղեցին հալածանօք հանդերձ. խոստովանողական մահուամբ կնքեաց զկեանս իւր յամին 1716. ի նաւարանին Կ. Պոլսի ի շղթայս։

Յաջորդ եղև սմա Մարտիրոս Մարգար Թուխմանեան Տիարպէքիրցի, որ համարի ձեռնադրեալ ի Յովհաննէս կաթողիկոսէ Սսոյ. նախ յանուն Տիարպէքրի և ապա փոխադրեալ ի Մարտին, և եկաց յաթոռն զամս իբր քսան (1718–1738)։

Մելգոն Մարգար Թուխմանեան եղբայր առաջնոյն, որ ձեռնադրեցաւ ի Բերիա յԱբրահամ Արքեպիսկոպոսէ տեղւոյն, յամին 1740. և յետ մտանելոյ ի սինհոդոսն ընտրութեան նորոյ Պատրիարքի, դարձաւ ի վիճակ իւր։

Եւ նստաւ ի տեղի նորա Յովհաննէս Թասպասեան. որ չոգաւ յաթոռ իւր, եկաց զամ մի. և գնացեալ ի Հռովմ վախճանեցաւ անդէն։

Եւ ընտրեցաւ փոխան նորա Յովսէփ Վ. Պալիթեան աշակերտ ուրբանեան դպրոցի. և զամս չորս կացեալ յիշխանութեան ննջեաց ի Տէր։

Յովակիմ Թասպասեան ձեռնադրեցաւ յամին 1789. ի 14. սեպտ. վարեաց զաթոռ իւր զամս բազում և ապա ձեռնադրեաց իւր օգնական զԵղիազար Գանտիլեան, որ ապա յաջորդ եղև նմա սակաւ ամս և ննջեաց ի Տէր։

Յովսէփ Ֆարրայեան Բերիացի աշակերտ ընծայարանին Զմմառի, ընտրեցաւ և ձեռնադրեցաւ ի Գրիգոր Պետրոս Զ։ Դարձաւ սա ապա ի Լիբանան և կացեալ անդ զժամանակ մի, մեկնեցաւ գնալ ի Բերիա հրաժարեալ յաթոռոյն Մարտինի. և հանգեաւ ի Տէր։

Իսկ զԱթոռն Մարտինի յանձանձէր Պատրիարքքն Կիլիկիոյ փոխանորդօք իւրովք։ Մինչև յամին 1855. ձեռնադրեցաւ Աբբեպիսկոպոս Մարտինի Գաբրիէլ Վարդապետ Շաշաթեան Բերիացի աշակերտ Զմմառի, որ արար ինչ ինչ բարեկարգութիւնս հաւանութեամբ Գերերջ. Պատրիարքին և ննջեաց ի Տէր։

Ընտրեցաւ ի տեղի նորա Մելգոն Վ. Նազարեան աշակերտ Զմմառի և ձեռնադրեցաւ յամին 1864. յ8. Հոկտ. կառոյց եկեղեցի նոր ի Մարտին յանուն Սրբոյն Յովսեփայ, և հանգեաւ ի Տէր։

Յաջորդ եղև սմա Յուսիկ Վ. Կիւլեան աշակերտ Զմմառի, որ ձեռնադրեցաւ յ7. Սեպտ. 1902. և վարէ զԱթոռն մինչև յայսօր։

Երևելի են Առաջնորդութիւնք Քարուչին կրօնաւորաց, որոց կեդրոն է Մարտին քաղաք։

Առաջնորդութիւնք

Ա. Մարտին հիմնեալ յամին. 1641.
Բ. Տիարպէքիր . . . . . 1665.
Գ. Ուրհա. . . . . 1841.
Դ. Մեզրէ . . . . . 1867.
Ե. Մալաթիա . . . . . 1867.

որք ունին ընդ առաքելութեամբ իւրեանց զկուսակալութիւնս Տիարպէքրի և Խարբերդի, զՈւրհա և զՌաս-էլ-այն։

Կան ի Մարտին Ասորի Եաղուպիք ոչ սակաւք, և Պատրիարքք նոցա նստի ի Տէր Զաֆրան մերձ ի Մարտին. են և Ասորի կաթողիկեայք սակաւաթիւք ի քաղաքին և ի գիւղօրէս. ունին առաջնորդ զԵպիսկոպոս ոք, Պատրիարքական փոխանորդ։

Յոյժ սակաւ է թիւ Քաղդէացւոց. որք ունին իւրեանց առաջնորդ։

Իսկ Հայ Էջմիածնականք զաւառին Մարտինի պատկանին առաջնորդութեան Տիարպէքրի. այլ ի Պաղդատ կայ առաջնորդ ուրոյն։

Հայ կաթողիկեայց աթոռանիստ եկեղեցին Մարտինոյ կառուցեալ է ի վաղ ժամանակաց. և նուիրեալ էր ի պատիւ Ս. Գրիգորի Լուսաւորչի, և ցայսօր նովին անուամբ յորջորջէ զայն ժողովուրդն. թէպէտ ի սկիզբն ԺԸ. դարու փոխեալ էր անունն ի Ս. Գէորգ։



Բ.

ՏԻԱՐՊԷՔԻՐ ԿԱՄ ԱՄԻԴ

Վիլայէթ է Տիարպէքիր ի Միջագետս, որ ունի երեք Սանճագս՝ Տիարպէքիր, Պաքիր–Մատէն, և Մարտին՝ զորմէ գրեցի յառաջ։

Երկոքին առաջին գաւառքդ ընդ Ուրհա Սանճագի Բերիոյ բովանդակեն զվիճակն Տիարպէքիրի։ Մեծագոյն մասն ընակչաց Մահմետականք են՝ Թուրք, Քուրդ և Արապ. իսկ ի Քրիստոնեայս բազմաթիւ են Հայք, որոց մի փոքր մասն է կաթողիկեայ և ունին ի քաղաքին եկեղեցի Ս. Լուսաւորիչ։

Վիճակն Տիարպէքիրի բովանդակէ յինքեան զհինգ առաջնորդութիւնս Հայ Էջմիածնականաց, որք են՝ Տիարպէքիր, Արղնի–Զնքուշ, և Բալու, որք յարակիցք են առաջնոյն. ևս Ուրհա աթոռ ինքնուրոյն. և բազմութեամբ թեմիցս յայտ լինի թուական առաւելութիւն սոցա ի կաթողիկեայց։

Են ի Տիարպէքիր այլ ևս Հասարակութիւնք քրիստոնէից. Լատինք մեծաւ մասամբ ի Հայոց որք ունին եկեղեցի և վանս. Քաղդէացիք և Ասորիք, առանձինն Եպիսկոպոսարանօք։ Յոյն կաթողիկեայք սակաւ թուով։ Կան բաժանեալ Յոյնք մանաւանդ ի Պաքիր Մատէն, և առաւել քան զնոսա Ասորի Եաքուպիկք։ Դասանին և բողոքականք առաւելութեամբ ի Հայոց։

Կանգնումն Աթոռոյն Ամդայ հնագոյն յոյժ է յընդ

թացս Բ. դարուն. և էին ընդ իշխանութեամբ նորա ամենայն աթոռք Միջագետաց՝ յարևելս և ընդ հիւսիս. Մծբին, Դարա, Մարտիրոպոլիս. Սոփենը Բասկարա, Պէզապտա, Արշամուշատ, Կէփէ–Բասթէլլի, Վ.օլօկէզօկերտ, Կոստանդիա, Ինճիլա, Սինճաբա, Մարոնոպոլիս, և Մարտէ:

Իսկ Եդեսիա գլխաւոր քաղաք Ոսրոէնայ ունէր զԺԲ. Եպիսկոպոսական Աթոռս, որք են:

Կոստանդիա, Կալինիկէ, Պարնէ, Թառան, Կիրկէսիա, Բէսինէ կամ Թէոդուպոլիս, Մարկոպոլիս. Տաւսարա, Հեմէրա, Նորն Վաղենտիա, Մակեդոնոպոլիս և Պիրդա:

Երկու Եպիսկոպոսապետութիւնք էին յայնժամ իզ. վիճակակից Աթոռովք. և այժմ երեք միայն վիճակք են՝ Մարտին, Ամիդ և Թարբերդ, որք բաց ի սահմանաց երկուց յառաջն գրեալ Եպիսկոպոսապետութեանց, զրաւեն զՄիջագետս համօրէն. և զայլ ևս գաւառս ընդ հարաւ երկայնեալս:

Այլ մեր թողեալ զհնագոյնսն յԵպիսկոպոսաց և յԵպիսկոպոսարանաց, ի դարսն ԺԵ. ԺԶ. ԺԷ. եղեն յԱմիդ կաթողիկեայ Եպիսկոպոսք, զորովք ևս զանց արարեալ, յամին 1727. Նստաւ Եպիսկոպոս Ամդայ Պետրոս վարդապետ Տէրպօղոսեան, որ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ առաքեաց ի Հռովմ ձեռամբ Լէօնարտոս կարմեղեան քահանայի: Գովեն զսա յոյժ Ամդեցիք ի թղթին՝ զոր յամին 1742 գրեցին առ Աբրահամ Պետրոս Ա. ի Լիբանան:

Յետ սորա յիշատակի Եւզինէոս Եպիսկոպոս Ամդայ, որ առանձնացեալ ի Մարտին բնակէր առ Մելգոն Մարգար Եպիսկոպոսի տեղւոյն, նշանակեալ ի գործս Աբրահամու Պետրոսի Ա. իբրեւ զմի յԵպիսկոպոսաց իւրոց:

Միքայէլ Պետրոս Գ. յամին 1755. Եպիսկոպոս

ձեռնադրեաց Ամդաց զՅովհաննէս վարդապետ Զմիւռնացի. զոր և յամին 1758 տարաւ ընդ իւր ի Հռովմ։ Իբրև յետ երկուց ամաց դարձան անտի ի Լիբանան, Յովհաննէս Եպիսկոպոս գնաց ի Կ. Պոլիս. ուր մնաց մինչև ցվախճան իւր ի 22 Յունի. 1770։

Այնուհետև զամս ութսուն մնաց պարապեալ Աթոռն այն. և ոչ նշանակի առ այս պատճառ ինչ. բայց եթէ, զի յաւուրս Յովհաննու Եպիսկոպոսի վէճ յարուցեալ էր Պատրիարքն Բաղդէացւոց, եթէ կաթողիկեայ Հայք տեղւոյն պատկանէին ինքեան. և թէպէտ Միքայէլ Պետրոս Դ. ընկալաւ վճիռ ի Ս. Աթոռոյն ի նպաստ իւր, այլ յայտ է՝ թէ հանգամանք ժամանակին չներեցին նմա և յաջորդաց նորա կարգել Եպիսկոպոս այնր Աթոռոյ։

Մինչև յամին 1850. Գրիգոր Պետրոս Ը. ձեռնադրեաց Եպիսկոպոս Ամդայ զՅակոբ վարդապետ Պահտիարեան, որ յամին 1880. հրաժեշտ ետ յաթոռոյն ի Կ. Պոլիս, ուր անցոյց զմնացուած կենաց իւրոց և անդ վախճանեցաւ։

Յաջորդ եղև նմին յետ ամաց ինչ Յովսէփ վարդապետ Ֆէռահեան աշակերտ Զմմառի որ ձեռնադրեցաւ յամին 1885. ի 19. Հոկտ. ի Ստեփանոս Պետրոս Ժ. կաթողիկոսէ. նստաւ զամս իբր երիս և վախճանեցաւ յԱմիդ։

Յաւուրս սորա եղեն դարձք բազումք ի կաթողիկեայ կրօնս յայլ և այլ գիւղօրէս. այլ կարի սակաւք մնացին հաստատեալքն։

Յետ սորա ընտրեցաւ Եպիսկոպոս Տիարպէքրի Անդրէաս վարդապետ Զէլէպեան, որ ձեռնադրեցաւ ի 6. Փետր. 1899. և վարէ զայն մինչև ցայսօր։

Կային կաթողիկեայ Հայք ի Տիարպէքր և Յուրհա ուր ևս շինեալ էր կանխաւ եկեղեցի, այլ ապա աճեաց թիւ կաթողիկեայց յայլ և այլ տեղիս, որպէս Յուր-

հա, ի Պիրէֆիկ, որ ունի եկեղեցի. ի Ճիպին, ի Կամուրջ. նաև ի Զնքուշ ուր ևս կայ եկեղեցի, ի Սևերէկ և յայլ գիւղօրէս։ Բաժանեալ Յոյնք ունին մետրապօլիտ որ նստի ի Տիարպէքր և է ընդ իշխանութեամբ Պատրիարքին Անտիոքայ։

Գ.

ԹԱՐԲԵՐԴ ԿԱՄ ՄԱՄՈՒՐԻԷԹ-ԸԼ-ԱԶԻԶ

Թէպէտ չունի տարածութիւն մեծ. այլ վիլայէթ է բազմամարդ. և են նորա երեք գաւառք՝ այս է՝ Մամուրիէթ-ըլ-Ազիզ, Տէրսիմ, և Մալաթիա։ Երկու առաջինք կազմեն զվիճակն Թարբերդի. իսկ Մալաթիա է վիճակ ուրոյն յառաջնոյն։

Սկիզբն դարձին Հայոց ի կողմանս Թարբերդի՝ եղև յամին 1858. և անդր առաջին քարոզիչ առաքեցաւ Յարութիւն վարդապետ Պաթմանեան, որ եկաց զսակաւ մի ժամանակ. ապա չոգան այլ քահանայք և ծաւալեցաւ կաթողիկէութիւն ի գաւառին և յԱրարկեր և յայլ ևս տեղիս։ Յամին 1865. կարգեցաւ Աթոռ Եպիսկոպոսական. և ձեռնադրեցաւ Ստեփան վարդապետ Խաչատուրեան ի Մշոյ, որ գնացեալ ի վիճակ իւր վարեաց զայն ամս բազումս և հանգեաւ ի Տէր։

Յետ նորա նստաւ յայն Աթոռ Աւետիս վարդապետ Արփիարեան Ակնեցի, որ ձեռնադրեցաւ Եպիսկոպոս ի 23. Սեպտ. 1890 և կացեալ զամս ինն, անուանեցաւ ի 5. Ապր. 1898. կաթողիկոսական փոխանորդ. յորջորջմամբ Արքեպիսկոպոսի Ակնարքարայ։ Եւ ապա հրաժարեալ անտի՝ առանձնացաւ

ի վանս Զմմառի յամին 1905։ Յաջորդեաց զնա Ստեփանոս վարդապետ Իսրայէլեան, որ ընկալաւ զձեռնադրութիւն Եպիսկոպոսութեան ի 6. Փետր. 1899. և վարէ զաթոռ իւր մինչև ցայսօր։

Ի վիճակին Խարբերդի կան և լատին քարոզիչք, եկեալք այսր յամին 1867. որպէս և Հայք լատին ծիսիւ ի քաղաքս և ի գիւղօրէս. այլ ըստ քաղաքա-կանին չեն բաժանեալ ի կաթողիկեայց։

Կաթողիկեայք՝ Հայ կամ Լատին ծիսիւ բնակին ի Մամուրիէթ-ըլ-Ազիզ. ուր կայ եկեղեցի կաթողի-կեայց, ի Հիւսէյնիկ, ի Թէօյլու, ի բազմաշէն գիւղ մեծ, յորս կան մատրանք. ի Դատէմ և յԱրաբկէր, որք ունին եկեղեցի. ի Կապան Մատէն և յայլ ևս տեղիս։

Մեծ է թիւ Էջմիածնական Հայոց՝ յետ այլազ-գեաց, Թուրքաց և Քրդաց բաժանելոց յազգս և ի տոհմս, և ունին սոքա վիճակս հինգ, յորոց Խարբերդ, Արաբկեր և Ակն առաջնորդականք են ուրոյն ի մի-մեանց։ Իսկ Զարսանճաղ ընդ Խոզաթայ և Մաշկեր-տի, և Զմշկածաղ՝ գաւայք Տէրսիմի, վիճակք են միացեալք ընդ Խարբերդի։ Ի վիճակաց սոսի են որ ընդարձակ են և ունին բազմութիւն ժողովրդեան. և են՝ որ նուազ, յորս սակաւ են ժողովուրդք. և թիւ համարոյ Հայոց յերկուս գաւառսդ չէ նուազ քան զութսուն հազար, որպէս համարիմ առանց ճշդելոյ։

Են ի գաւառիս և Ասորիք Հայախօսք, մեծագոյն մասն ի Յակոբիկ անուանելոց, որք ունին և եկեղե-ցիս. իսկ կաթողիկեայ Ասորիք կարի սակաւք են. և նորադարձք առհասարակ։

Եւ ահա այսոքիկ են երեքին վիճակք Միջագի-տաց, այսինքն Մարտին, Տիարպէքր կամ Ամիդ, և Խարբերդ կամ Մամուրիէթ-ըլ-Ազիզ։

Յոյնք ևս ունին Մետրապոլիտ ի Կապանմատէն, որ է ընդ իշխանութեամբ Պատրիարքին Անտիոքայ։

Դ.

ՎԻՃԱԿՆ ՄՇՈՅ

Կաթողիկեայ Հայք գաւառին Մշոյ կային ի հին ժամանակաց և ի հաստատութեան Եպիսկոպոսութեան Կարնոյ, զնմանէ կախէին։ Ընդարձակութիւն թեմին Կարնոյ, որ տարածանէր յերիս Իլայէթս, յԵրզրում, ի Պիթլիզ և ի Վան, հարկ արար խորհել ինչ զայնմանէ։ Սմին իբր յամին 1880. ի Պատրիարքական սինհոդոսի բանք եղեն յաղագս բաժանելոյ զայն յերկուս վիճակս. Ա. Աթոռն հաստատէր զայս որոշումն, և յայս սակս ի գործ եղաւ այն։ Այնպէս զի Վիլայէթն Էրզրում բովանդակէ զԿարին. իսկ Վիլայէթքն Պիթլիզի և Վանայ զՄշոյ նոր վիճակն, և են ի սմա հնագոյն գաւառք՝ Ցուրուբերան, Մոկք, Կորճայք և մեծ մասն Վասպուրականի։ Բաց ի կաթողիկեայց գաւառին Մշոյ որք բնակին ի քաղաքն Մուշ և յերիս կամ ի չորս մերձակայ գիւղօրէս. են և ի Պիթլիզ, ևս առաւել ի Վան և որ շուրջ զնովաւ ի նորոյ յաւելեալքն ի ժողովուրդն կաթողիկեայ այլ նուազ են սոքա թուով քան զառաջինսն։

Յետ որոշելոյ զատուցման թեմին յերկուս՝ Ստեփանոս Պետրոս Ժ. փոյթ կալաւ ձեռնադրել ի վերայ նորահաստատ Աթոռոյն Մշոյ Եպիսկոպոս զՅարութիւն վարդապետ Ճամճեան Պոլսեցի աշակերտ ուրբանեան դպրոցի ի 1. Հոկտ. 1880։

Սա կացեալ անդ զամս չորս հրաժարեցաւ յԱթոռոյն, և անուանեցաւ ապա Եպիսկոպոս Պրուսայ։

Յաջորդ եղեւ սմա Յովհաննէս վարդապետ Յովհան-նէսեան Խարբերդցի, որ ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Մշոյ յ19. Օգոստ. 1887. որ յետ սակաւ ամաց հարկեցաւ առանձնանալ ի Կ. Պոլիս: Եւ յամին 1890. հրաժարեալ ի Մշոյ՝ անուանեցաւ Եպիսկոպոս Անկիւրիոյ, ուր կնքեաց զկեանս իւր:

Եւ կարգեցաւ փոխան նորա Եպիսկոպոս Մշոյ Ներսէս վարդապետ Ճնտոյեան աշակերտ Մխիթա-րեանց Վենետկոյ. և ձեռնադրեցաւ յ31. Մայիս 1892 և վարէ ցայսօր ժամանակի զայն վիճակ. կան արդ ի Մուշ և յոմանս ի գիւղօրէից եկեղեցիք, ևս Մա-տրունք յայլ և այլ տեղիս: Մեծ մասն բնակչաց երկուց Վիլայէթիցդ են Թուրք և Քուրդ Մահմետա-կանք. բազմաթիւ են և Հայք: Քառեակ թեմս ուն-նին էջմիածնականք ընդ Պատրիարքութեամբ Կ. Պոլ-սի, որք են Վան, Մուշ, Բաղէշ և Սղերտ. և հին-գերորդ մի ևս՝ Կտուց-Լիմն յարակից աթոռ վիճակին Վանայ: Անդ է և Պատրիարքութիւնն Աղթամարայ իւրով կրկին վիճակօք, որք են Աղթամար և Խիզան:

Ի հարաւակողմն Պիթլիզի արժանի յիշատակու-թեան է Եպիսկոպոսական թեմն Սէղերտի, որ պատ-կանի Քաղդէացի կաթողիկեայց:

Ի նոյն կողմանս և ի հարաւոյ Վիլայէթին Վա-նայ գտանին բազմութիւն մեծ Ասորի Յակոբիկեանց և մանաւանդ Նեստուրի Քաղդէացւոց, ընդ որս են և սակաւաթիւ կաթողիկեայք յերկուց ազգացդ:

Ե.

ԷՐԶՐՈՒՄ ԿԱՄ ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ

Մի է այս ի ծաղկեալ վիճակաց Պատրիարքութեան և բազում իրօք առաւելեալ. փակէ յինքեան զՎիլայէթն ողջոյն Էրզրումի։ Բնակիչք թուրք են և Քուրդք Մահմետական. բազմութիւն է և Հայոց, իսկ Յոյնք սակաւք են թուով։

Կաթողիկեայ Հայք ևս տարածեալ են յայլ և այլ կողմանս գաւառին՝ մեացորդք հնոց ժամանակաց. այլ արդ չէն թուով բազումք, որպէս երբեմն, յորժամ հազարաւոր տունք էին կաթողիկեայց ի նմա, որք գաղթեցան ի հնումն։ Այլ և այժմ աճէ մեացորդն խնամով Պետութեան։

Հին էր եպիսկոպոսութիւն Կարնոյ, ի Դ. և ի Ե. դարս անկաւ ընդ իշխանութեամբ Մետրապոլտին Սեբաստիոյ, որ էր ընդ իշխանութեամբ վեցերորդապետին Կեսարու Կապադովկացւոց. այլ ապա փոխեցան Գանգամանք իրացն։

Նոր Եպիսկոպոսութիւն Կարնոյ հաստատեցաւ յ30. Դեկ. 1850. և Յովսէփ վարդապետ Հաճի Դաւիթ ընտրեցաւ և ձեռնադրեցաւ Եպիսկոպոս ի 25. Յունի. նոյն ամի. և գնաց ի Վիճակ իւր ի 29. Օգոստ. 1851. այլ չեղև երկարակեաց ի կեանս իւր։

Յաջորդ եկաց նմին Մեծանուն Յովհաննէս վարդապետ Սերվիան Բաղիշեցի, աշակերտ Ուրբանեան դպրոցի, որ եղեալն էր յառաջ Ազգապետ կամ քա-

դաքային Պատրիարք։ Ձեռնադրեցաւ սա յամին 1855. և հանգեաւ ի Տէր ի 21. Մայի. 1865. կառոյց Եպիսկոպոսարան մեծագործ։

Յետ սորա յ18. Մայի. 1866. ընտրեցաւ Ստեփանոս Վ. Մելքիսեդեկեան կարնեցի աշակերտ Ուրբանեան դպրոցի, որ ձեռնադրեցաւ յ2. Յուլի. 1866։ Յաւուրս սորա բաժանեցաւ վիճակն յերկուս՝ ի կարին և ի Մուշ։ Բազմացոյց զեկեղեցիս ի վիճակի իւրում։ Առ վատառողջութեան իւրում հրաժարեցաւ յԱթոռոյն, և առանձնացաւ ի գիւղն Ռապաթ ի հիւսիսակողմն քաղաքին Կարնոյ. և կնքեաց զկեանս իւր սրբակրօն վարուք։

Առ կենդանեաւ նորին ընտրեցաւ և ձեռնադրեցաւ Եպիսկոպոս ի 23. Սեպտ. 1890. Կարապետ վարդապետ Քչուրեան, որ արդ յամաց հետէ առանձնացեալ է ի Կ. Պոլիս։

Որպէս ասացաւն՝ սփռեալ են կաթողիկեայք յայլ և այլ գաւառս և ի գիւղօրէս Վիլայէթին։

Ա. — ի Կարին և ի մօտակայ գիւղօրէս նորին ի Հինձք, յԱրծաթի և ի Թուանջ։ Եկեղեցիք քաղաքին և առաջնոցն երկու գիւղօրէից նուիրեալ են ի պատիւ Ս. Աստուածածնի. իսկ Թուանջին՝ Ս. Յակոբայ։

Բ. — Մեծագոյն բազմութիւն է կաթողիկեայց ի Թորդում և ի Կիսկիմ, ուր գտանին բազում գիւղօրէք, որպէս Նորշէն և Ռապաթ. և իբր տասնեակ գիւղք Խոտորջրի, Մոխրկուտի, և Կարմիրքի. յորս են բազմաթիւ եկեղեցիք և մատրունք։

Գ. — Վերի Բասէն, ուր ի չորս գիւղս կան և ընակին կաթողիկեայք, որոց գլխաւորն է Ալիճագրակ։

Վարի Բասէն, յորում նշանաւոր է գիւղն Ճոասոն։

Են և յԱլաշկերտ ի գիւղօրէս Հայ կաթողիկեայք

տրպէս ի Մոլլա–Սիւլէյման, ի Խասանուր, յԵրիցու գիւղ և այլն։

Վիճակն կարնոյ առ Էջմիածնականս բաժանեալ է յԵօթն Մասունս կամ ի Թեմս յորս Էրզրում, Էրիզա, Բաբերդ և Պայազիտ ընդ առաջնորդովք գտանին. իսկ Բասէն, Դերջան և Քղի Թեմք են յարակից Էրզրումի։ Եւ ի վիճակս յայսոսիկ կան եկեղեցիք բազմութեամբ, վանորայք և ժողովուրդ բազում աւելի քան 100 հազարաց։

Թիւ Ցունաց սակաւ է. և մետրոպոլիտ նոցա նստի Էրզրում, և է ընդ իշխանութեամբ Պատրիարքին Անտիոքայ. չկան ի նոսա կաթողիկեայք։

Զ.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻՃԱԿՆ

Է վիճակ ընդարձակ, և ոչ միայն փակէ յինքեան լկուսակալութիւնն համանուն, այլ և զԱմասիա սանջակ Վիլայէթին Սեբաստիոյ։ Մեծ բազմութիւն ընակչաց Մահմետական է. գտանին և ոչ սակաւ Քրիստոնեայք Յոյնք և Հայք առաջինք բազմաթիւ են ի Վիլայէթին Տրապիզոնի, և երկրորդքն յԱմասիա գաւառի։ Սահմանք վիճակիս են՝ յարևելից սահմանք Պետութեան, ի հարաւոյ Էրզրում և գաւառք Սեբաստիոյ. յարևմտից Էնգարէ և Քաստէմունի, և ի Հիւսիսոյ Սեաւ ծովն։ Նուազ է թիւ կաթողիկեայ Հայոց, որք բնակին ի Տրապիզոն, ի Սամսոն, ի Մարսուան և յԱմասիա. այլ և սակաւք յայլ տեղիս։

Հնաւուրց է ժողովուրդն Տրապիզոնի, որ աճի եկօք

ի կողմանցն Կարնոյ, ունին եկեղեցի, Եպիսկոպոսաբան և դպրոց։ Սամսոնի ժողովուրդն մեծաւ մասամբ գաղթեալ է յԵւդոկիոյ և ի Տրապիզոնէ, ունի եկեղեցի։ Իսկ Մարսուան և Ամասիա նորադարձք են ի քառասուն և աւելի ամաց հետէ. յառաջինն շինեալ է եկեղեցի։ Եպիսկոպոսութիւնն Տրապիզոնի սահմանեցաւ յ30. Ապր. 1850. և առաջին Եպիսկոպոս եղև Յովսէփ վարդապետ Առաքելեան որ ձեռնադրեցաւ ի 20. Յուն. 1852. և հրաժարեցաւ յամին 1863։

Յաջորդեաց զնա Յովհաննէս վարդապետ Կիւրեղեան Տրապիզոնցի, որ ընտրեցաւ ի 25. Մարտի 1865. և ձեռնադրեցաւ ի 26. Մայիսի 1865. և հանգեաւ ի Տէր յ18. Օգոստ. 1874։

Զամս երիս մնաց պարապ. և ապա ընտրեալ հաստատեցաւ ի 14. Օգոստ. 1879. Եպիսկոպոս Տրապիզոնի Պօղոս վարդապետ Մարմարեան Տրապիզոնցի, որ ձեռնադրեցաւ ի 23. Սեպտ. նոյն ամի. և հանգեաւ ի Տէր։

Յաջորդ եղև սմա Ստեփանոս վարդապետ Աբիկեան Կ. Պոլսեցի, ընտրեցաւ և ձեռնադրեցաւ ի 25. Յունիսի 1903։ Եւ վարէ զայն Աթոռ մինչև ցայսօր։

Ի վաղ ժամանակաց կան Լատինք ի Տրապիզոն, ի ձեռն Փարուչին կրօնաւորաց. որք ունին առաքելութիւնս երիս զՏրապիզոնի. զԲիրասունի և զՍամսոնի։ Յետոյ ուրեմն հաստատեցան Յիսուսեան կրօնաւորք յԱմասիա և ի Մարսուան։ Իսկ ազգն Յունաց, յորս ոչ գտանին կաթողիկեայք, ունին մետրոպոլիտս երիս՝ զՏրապիզոնի զԱմասիոյ և զԿիւմիւշխանէի ընդ իշխանութեամբ Պատրիարքին Կ. Պոլսի։

Են ի Մարսուան և բողոքական Հայք. որպէս և յայլ տեղիս վիճակին։

Է.

ՍԵԲԱՍՏԻԱ ԵՒ ԵՒԴՈԿԻԱ

Երկու վիճակք էին յառաջագոյն. այլ ապա միացան ընդ միով հովուաւ. յորոց Սեբաստիա ընկալաւ գյորջորջումն Աբքեպիսկոպոսի կոնդակաւն Quod ab Episcopis տուեալ յ30. Մայի. 1892. իսկ Եւդոկիա միայն Եպիսկոպոսական Աթոռ ընդ նովաւ։

Մեծ մասն գաւառին Սեբաստիոյ և գաւառն Նիկոպոլսի կազմեն զվիճակն Սեբաստիոյ. իսկ գաւառն Թոգատու նորին Վիլայէթի՝ զԵւդոկիոյն։

Միացեալ վիճակս այս, որ յօրինեալ գործէ զարևելեայ կեդրոն փոքրուն Ասիոյ՝ ընդարձակ է, և բովանդակէ յինքեան զբազմութիւն ժողովրդեան իբր 900,000. յորոց 57,000 Յոյնք են՝ 180,000 Հայք, 2000 բողոքականք, 400 հրեայք։ Այլ և այնպէս այս թիւք չեն ճշդագոյնք։ Մեծ մասն ժողովրդեան Մահմետականք են յայլ և այլ տոհմս և յազգս։

Կաթողիկեայց թիւ չէ մեծ ինչ. կեդրոն է նոցա Բրգնիք գիւղն մօտ յոյժ Սեբաստիոյ. ունի եկեղեցի Ս. Սարգիս, Առաջնորդարան և երկու դպրոցս մեծաշէնս և նորակառոյցս։ Սակաւ յոյժ են կաթողիկեայք ի Սեբաստիա, ունին եկեղեցի Ս. Վլաս և բնակարանս քահանայից։ Երկու եկեղեցիք են ի Կիւրին Ս. Աստուածածին և Ս. Փրկիչ. և թիւ ժողովրդեանն սակաւ իբր 400։

Թիւ կաթողիկեայց Եւդոկիոյ հասանէ ի հազար

մի և եթ. մեծ է եկեղեցի քաղաքին Նուիրեալ ի պատիւ Աւետման Ս. Կոյս Աստուածածնին, առ որում կայ և Առաջնորդարան նորոգեալ. կայ մատուռ մի ի Մալ-գայասի և Վանք Անարատ Յղութեան Ս. Կուսին ի Գօճաճրգ։ Կաթողիկեայք կողմանցս հնաւուրցք են առ հասարակ։

Յառաջագոյն համարեալ էր վիճակս այս իբր առանձինն թեմ Պատրիարքական և տեղապահք կաթողիկոսին վարէին զայն յանուն նորա, յորոց սակի էին և Միքայէլ Արքեպիսկոպոս Տէր Աստուածատրեան և Իգնատիոս Եպիսկոպոս Գալըպճեան։

Յամին 1858. ձեռնադրեցաւ Արքեպիսկոպոս Սեբաստիոյ Ներսէս վարդապետ Հալէպլեան աշակերտ Վանաց Զմմառի, որ զամս Ը. կալեալ զաթոռն հանգեաւ ի Տէր յամին 1866։ Իսկ Եւդոկիոյ հովիւ եղև Արսէն վարդապետ Ա. Վ. Անճարակեան, յԱնտիոքեան ուխտէ, որ ձեռնադրեցաւ 12. Օգոստ. 1859. և հրաժարեցաւ յ17. Յուլի. 1865. և առանձնացեալ ի Հռովմ հանգեաւ ի Տէր։

Այնուհետև մինչև ցամն 1877. Ցացին Սեբաստիա և Եւդոկիա ի ձեռս Պատրիարքական փոխանորդաց զամս իբր երկոտասան։

Ապա ի 14. Օգոստ. յամին 1877. հաստատեցաւ և ի 23. Սեպտ. նորին ամի ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Սեբաստիոյ և մատակարար Եւդոկիոյ Կարապետ վարդապետ Գատիֆեան, որ յամին 1890. հրաժարեալ առանձնացաւ յԵւդոկիա. և հանգեաւ ի Տէր։

Յետ նորա յաջորդ եղև Աթոռոյն Սեբաստիոյ և Եւդոկիոյ Սահակ վարդապետ Հաճեան, որ ձեռնադրեցաւ յ8. Ապր. 1892. և յ30. Մայի. նոյն ամի կոչեցաւ Արքեպիսկոպոս Սեբաստիոյ և Եպիսկոպոս Եւդոկիոյ։ Որ ապա յամին 1905. հրաժարեցաւ յաթոռոյն, և առանձնացաւ ի Կ. Պոլիս՝ անուանեալ Արքեպիսկոպոս Պիզունթայի։

Է և լատինաց առաքելութիւն ի Սեբաստիա և յԵւդոկիա ի ձեռս Յիսուսեանց. այլ չկան անդ լատին ժողովուրդք։

Երբեակ վեճակք են Էջմիածնական Հայոց՝ Սեբաստիա, Եւդոկիա և Նիկոպոլիս, որք հպատակին այժմ Պատրիարքութեան Կ. Պոլսի։

Նաև Սոյ Աթոռն ունի վիճակս երիս ընդ իւրով իրաւասութեամբ Ա. Տիվրիկ. Բ. Կիւրին, որ յառաջն բաժանէր յերիս ի Կիւրին, ի Մանճըլըք. և Կէմէրէկ էր մասն վիճակին Եօզկաթի, զորս միաբանեաց այժմու կաթողիկոսն ի մի. և Գ. Տէրէնտէ։

Սեբաստիա էր յառաջագոյն Աթոռ մեծ և ընդարձակ, որ ունէր ընդ իւր և բազում Եպիսկոպոսարանս. էին նորա և մեծանուն Եպիսկոպոսք փայլեալք սրբութեամբ, որպիսի էր Ս. Վլաս, և Ս. Պետրոս եղբայր Մեծին Բարսղի և այլք. նոյնպէս և Աթանագինէս Պիտակթոլեայ Եպիսկոպոս և Ս. Գրիգոր Նիկոպոլսի. թող և զբազմութիւն Մարտիրոսաց, յորս հռչակաւորք են Քառասունքն Սեբաստիոյ. և Եւստաթիոսեանք։

Ը.

ՎԻՃԱԿՆ ՄԵԼԻՏԻՆԵԱՅ

Այս վիճակ բովանդակէ յինքեան զգաւառն Մելիտինոյ կամ Մալաթիայի, որ սանճագ է կուսակալութեան Խարբերդի, այն է Մամուրիէթ էլ Ազիզ։

Մահմետական է բազմութիւն բնակչացն և յաւէտ ի Բրդաց բաժանելոց յայլ և այլ տոհմս։ Նուազ է թիւ Հայոց գտանին և Ասորի Եպգուպիք սակաւք։

Փոքր մասն մի ի Հայոց միացեալ է ընդ Ս. Եկեղեցւոյ սկսեալ ի կէս դարէ. որք բնակին ի Մալաթիա և ի գիւղօրէս նորա. ի քաղաքին կայ եկեղեցի և Եպիսկոպոսարան և դպրոցք։ Նոյնպէս ի Պեհեանի և ի Հիսն Մանսուր, որք ունին եկեղեցի. ևս և ի գիւղօրէս վերջնոյն։

Կայ ի Մալաթիա առաքելութիւն Բարուչին կրօնաւորաց. այլ սակաւ է թիւ ժողովրդեան նոցա. ունին սոքա եկեղեցի ի քաղաքին և կայս ուրեք ուրեք։

Կարի սակաւ է թիւ Ասորի կաթողիկեայց ի սահմանս Հիսն Մանսուրի։

Ի վաղ ժամանակաց սկսեալ է Աթոռն Մելիտինեայ, յերկրորդ և յերրորդ դարս յիշատակին Ս. Եպիսկոպոսունքն Յուսիկ և Ակակ. ամբարձաւ ապա յաթոռ մետրոպոլտական։ Յետ ժամանակաց անկաւ յոյժ այս եկեղեցի, և տկարացաւ։

Մինչև շնորհօքն Աստուծոյ ամբարձաւ ի նոյն Ղեւոնդ վարդապետ Խոսխոռունի ի Բրգնկոյ, աշակերտ

Վանայ Զմմառի զոր ձեռնադրեաց Գրիգոր Պետրոս Ը. յ7. Ապր. 1861։ Սա եղև հիմնադիր այսր Առաքելութեան, որում օժանդակեցին և այլ Միաբանք Վանայ Զմմառի ջանիւ մեծաւ և բազմապատիկ աշխատութեամբ։

Յաջորդ եղև սմա Միքայէլ վարդապետ Խաչատուրեան աշակերտ Վանայ Զմմառի, որ ձեռնադրեցաւ Եպիսկոպոս ի 6. Փետր. 1899. և վարէ զայն մինչև ցայսօր ժամանակի։

Հայք՝ որ ի սմա պատկանին Աթոռոյն Սսոյ, և յառաջն բաժանէին յերիս մասունս, ի Մալաթիա, ի Պեհեսնի և ի Հիսն Մանսուր. և կային ի վերայ նոցա երեք առաջնորդք ուրոյն. իսկ այժմ նոր Պատրիարքն Սսոյ ամփոփեաց զայն ի մի միայն աթոռ Մալաթիոյ։

Թ.

ՄԱՐԱՇ ԿԱՄ ԳԵՐՄԱՆԻԿ

Սանճագն Մարաշ, որ մասն է կուսակալութեան Հալէպի, յօրինէ զվիճակս։ Մեծագոյն մասն բնակչացն Մահմետականք են՝ Թուրք, Քուրդք և Թուրքմէնք՝ յայլ և այլ տոհմս զատուցեալք, ևս Չէրգէզք։ Են և հայք ոչ սակաւք։

Կաթողիկեայք նուազ են թուով ի հայս. և մեծ մասն ի նոցանէ բնակի ի Մարաշ քաղաքի, ուր կան եկեղեցի, եպիսկոպոսարան և դպրոցք։ Են ևս կաթողիկեայք ի Զեթուն, Յէլ-Պօսթան և յայլ տեղիս, յառաջին երկուսն կան եկեղեցիք և բնակարանք քահանայից, և դպրոցք։

Են ի վիճակիս Լատին քարոզիչք ի կարգէ Ս. Փրանկիսկոսի, որք ունին առաքելութիւնս ի Մարաշ, յԵէնիճէգալէ, ի Պունճուք և ի Կապան։

Առաջինն յԵպիսկոպոսաց, որ յետ Աբրահամու Պետրոսի Ա. անուանեցաւ յանուն Մարաշոյ՝ եղև Դուկաս վարդապետ Անթափցի. որ ձեռնադրեցաւ յամին 1752. և ոչ գնաց ի վիճակ իւր. այլ առանձնացաւ ի Կ. Պոլիս, ուր և ի խոր ծերութեան կնքեաց զկեանս իւր յամին 1795. յամսեանն Օգոստոսի։

Յետ մեծասան ամաց կարգեցաւ ի նոյն Աթոռ Պետրոս վարդապետ Ճէրանեան Բիլլացի աշակերտ Վանաց Զմմառի. այլ սքանչելի գիտութեամբ և սրբութեամբ, որ ձեռնադրեցաւ Եպիսկոպոս յամին 1806. և ոչ կարաց գնալ ի վիճակ իւր, ուր չկային կաթողիկեայք. այլ բնակէր ի վանս Զմմառի։ Եւ յետ վեց ամի ընտրեցաւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ յամին 1812. և անուանեցաւ Գրիգոր Պետրոս Զ։

Սմա՝ զկնի երեսուն ամաց, յաջորդ եղև Պետրոս վարդապետ Աբէլեան Անկիւրացի աշակերտ Վանաց Զմմառի, որ ձեռնադրեցաւ Եպիսկոպոս յամին 1842։ Սա յամին 1859. չոգաւ ի վիճակ իւր, ծաղկեալ պայծառացոյց զայն, և եղեալ հիմնադիր այնր վիճակի՝ յորջորջեցաւ Մեծ ի ժողովրդենէ իւրմէ։ Հանգեաւ ի Տէր յամին 1875։

Ապա ի 14. Օգոստ. 1877. ամբարձաւ յայն Աթոռ Կղեմէս վարդապետ Միքայէլեան աշակերտ Անտոնեան ուխտի, որ ձեռնադրեցաւ ի 23. Սեպտ. նոյն ամի և հանգեաւ ի Տէր։

Եւ յետ ամաց ինչ կալաւ զաթոռն Աւետիս վարդապետ Թուրքեան աշակերտ Վանաց Զմմառի, որ ձեռնադրեցաւ ի 23. Սեպտ. 1890 ապա յետ իբր մեծասան ամաց հրաժեշտ տուեալ անտի՝ ընտրեցաւ Արքեպիսկոպոս Բերիոյ։

Յաջորդ եղև սմա Յովհաննէս վարդապետ Մուրատեան, որ ամբարձաւ ի նոյն ի 28. Օգոստ. 1901. և ձեռնադրեցաւ ի 4. Դեկտ. նոյն ամի. որ և հրաժեշտ տուեալ յաթոռոյն առանձնացաւ ի Վանս Զմմառի յամին 1905։

Առ Էջմիածնականան՝ Աթոռոյն Սսոյ պատկանի վիճակն Մարաշոյ. յառաջագոյն այլազգ ինչ բաժանեալ էր. այլ ապա կաթողիկոսք, որ ի Սիս՝ միաբանեցին զայն ի մի միայն Աթոռ. իսկ մօտ ի կէս ԺԸ. դարուն բաժանեցին յերկուս ի Մարաշ և ի Զեթուն. յոր յաւելին և երրորդ՝ Ֆորնոս, իսկ այժմու կաթողիկոսն՝ միացոյց ի մի զԶեթուն և զՖորնոս, և մնացին արդ երկու թեմք՝ Մարաշ և Զեթուն։

Ժ.

ՎԻՃԱԿՆ ԲԵՐԻՈՅ ԿԱՄ ՀԱԼԷՊԻ

Բովանդակի ի սմա Հալէպ Սանճագ համանուն վիլայէթին, ունի ևս զման Զօր Սանճագի որ յարևմտից Եփրատայ հանդերձ գլխաւոր քաղաքաւն։ Մահմետանք համարին 700,000. Հայ կաթողիկեայք իբր 9000. Հայ Էջմիածնականք 30,000. Մելքիթք 10,000. Յոյնք, 15,000. Մարոնիք 5,000. Ասորիք 3,000. և Ասորի Յակոբիկ 37,000, (որ թուի առաւելեալ) և այլ ևս ժողովուրդք որպէս և լատինածէնք, որոց մեծ մասն ի Հայոց են։

Ի Բերիա բազմաթիւ են կաթողիկեայ Հայք քան զբաժանեալսն, և ունին եկեղեցի և մատուռն, Եպիսկոպոսարան և դպրոցս, յորոց մին բարձրագոյն։ Կան ևս ի Քիլիս, յԱնթափ և ի Քեսապ. որք ունին ե-

կեղեցիս, մէն մի զպրոց յիւրաքանչիւր տեղիս, որ-
պէս և շուրջ զԲեսապաւ, և ի Պրլան և ի Նիզիպ։
Են ի վիճակին երեք Հայ գիւղք Խրտրտ-պէկ, առ
Սավէտիոյ Գնէի մօտ ի Ճլատր Շուղուր և Պաղճազ առ
երի Բեսապայ, յորս Հայք հետևին լատին ծիսի ընդ
առաջնորդութեամբ փրանկիսկեան կրօնաւորաց, յորոց
ձեռս է ևս և Նիզիպ գիւղ կամ աւան Պիլէճիկի,
Եպիսկոպոսութիւնն Բերիոյ հին է, այլ ոչ Հայոցն։
Թովմաս Եպիսկոպոս գնաց ընդ Պատգամաւորս Կոս-
տանդին Վահկեցի կաթողիկոսի ի ժողովն Փլորեն-
տիոյ և այլք ոմանք ընդ կաթողիկոսաց Սսոյ գրեցին
թուղթ Միաբանութեան ի Հռովմ։ Այլ գալով ի նոր
ժամանակ, Աբրահամ Անթափցի եղև առաջին Եպիս-
կոպոս Բերիոյ, որ ձեռնադրեցաւ ի քաղաքի անդ ի
Պետրոս Պիսակ կաթողիկոսէ Սսոյ. յամին 1710. և
զամս երեսուն վարեաց զայն պաշտօն ի մեծամեծ
դժուարութիւնս և տագնապս. և յամին 1740. ըն-
տրեցաւ կաթողիկոս Պատրիարք Կիլիկիոյ։

Ի նմին 1740. ամի ձեռնադրեցաւ Եպիսկոպոս
Յակոբ վարդապետ Յովսեփեան, նախ իբր օգնիչ. և
ապա յաջորդ նորին Աբրահամու, որ և յետ նորա
կալաւ զաթոռ կաթողիկոսութեան յամին 1749։

Սա յառաջ քան զմահ իւր ընտրեալ էր Աբքե-
պիսկոպոս Բերիոյ. զՀ. Միքայէլ վարդապետ Գաս-
պարեան յԱնտոնեան Ուխտէ, և կոչեալ էր իսկ զնա
ի Լիբանան առնուլ զձեռնադրութիւն Եպիսկոպոսու-
թեան. այլ յառաջ քան զհասանելն ննջեաց Հայրա-
պետն ի Տէր. և ձեռնադրեցին զնա Եպիսկոպոսունք
ի պարապութեան Աթոռոյն յամին 1753. որ և ան-
դէն ընտրեցաւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ ի նմին
ամի։ Զեղ սա փոխան իւր զայլ ոք՝ Եպիսկոպոս Բե-
րիոյ. այլ ինքնին վարէր զայն աթոռ գործակալօք
զամս բազումս։ Յետոյ ուրեմն ի վերջին աւուրս կե-

նաց իւրոց, որոշեաց. զի կալցի զԱթոռն Բերիոյ Գաբրիէլ վարդապետ Ղազիւլեան աշակերտ վանաց Զմմառի։

Գաբրիէլ Ա. ձեռնադրեցաւ յԵպիսկոպոսաց ի պաբապութեան անդ Պատրիարքական Աթոռոյն. և հանգեաւ ի Տէր յամին 1811։

Յաջորդ եղև սմա Գաբրիէլ Բ. Խրտէյտեան բերիացի աշակերտ վանաց Զմմառի, ձեռնադրեցաւ յամին 1811, և հանգեաւ ի Տէր յամին 1823։

Աբրահամ Բ. Բիւբէլեան Բիբլոսցի աշակերտ վանաց Զմմառի, սա ձեռնադրեցաւ ի Գրիգոր Պետրոս Զ. կաթողիկոսէ, և հանգեաւ ի Տէր յամին 1833. են սորա գրուածք ոտանաւոր ընդ ուրումն էջմիածնականի ի նիւթ հաւատալեաց։

Բարսեղ վարդապետ Այվազեան բերիացի աշակերտ վանաց Զմմառի, ձեռնադրեցաւ ի նոյն Գրիգոր Պետրոս Զ. է յամին 1838. և հանգեաւ ի Տէր յամին 1859.

Գրիգորիոս վարդապետ Պալիթեան բերիացի ձեռնադրեցաւ ի Գրիգոր Պետրոս Ը. կաթողիկոսէ յ2. Փետր. 1861, և հանգեաւ ի Տէր ի 28 Դեկտ. 1897։

Ապա ի Մարաշոյ փոխադրեցաւ յԱթոռն Բերիոյ Աւետիս Եպիսկոպոս Թուրքեան աշակերտ վանաց Զմմառի յամսեանն Մարտի 1899. և յամին 1900. յամսեանն Յունիսի հանգեաւ ի Տէր։

Եւ ընտրեցաւ ի տեղի նորա Օգոստինոս վարդապետ Սայէղեան բերիացի, որ ձեռնադրեցաւ ի 6. Յուլիս 1902. և վարէ զԱրքեպիսկոպոսական Աթոռն Բերիոյ մինչև ցայսօր։

Վիճակն Բերիոյ ըստ բոլորին պատկանի Աթոռոյն Սսոյ և յառաջագոյն բաժանեալ էր ի հինգ վիճակս, որք էին Հալէպ, Բիլիս, Անթափ, Իսկէնտէրուն և Անտիոք։ Իսկ այժմու կաթողիկոսն ամփոփեաց զայնս

յերիս, որք են Ա. Հալէպ ընդ Բիլիսի, Իսկէնտէ-
ռունի և Պելանի Բ. Անթափ և Գ. Անտիոք և որ
շուրջ զնովաւ, որք ունին ուրոյն Առաջնորդս։

Կաթողիկեայ Ցոյնք, Ասորիք և Մարոնիք ունին
զԱրքեպիսկոպոսունս մէն միոյ յազգացդ։ Լատինաց
են Առաջնորդ Փրանկիսկեանք, գտանին և ի Յիսու-
սեանց, է և Բազդէացւոց փոխանորդ Պատրիարքա-
կան։

Նաև բաժանեալ Ցոյնք ունին զԱռաջնորդ իւրեանց։

ԺԱ.

ՎԻՃԱԿՆ ԱՏԱՆՈՑ

Վիլայէթն Ատանոյ լրիւն իւրով յօրինէ զվիճակն
համանուն. մեծ մասն բնակչաց Մահմետական է,
Թուրք, Քուրդ, Թիւրքմէն և Նըսէյրի. յետ սոցա են
Հայք, և ապա Ցոյնք և յաւէտ ի սահմանս Իշ-էլիի։
Կան ևս Մարոնիք, Ցոյն կաթողիկեայք, Ասորիք,
Բազդէացիք, և Լատինք, որոց առաջնորդեն՝ Յիսու-
սեանք յԱտանա, Բարուչինք ի Մերսին և Լազարեանք
հոգ տանին հոգևորական պիտոյից ժողովրդեան, որ
հայ է ազգաւ և բնակի յԱզպէս։

Կաթողիկեայ Հայք միանալ սկսան ընդ եկեղեցւոյ
յամին 1849. և աճեցան հետզհետէ. ունին եկեղեցի
առաջնորդարան և դպրոցս յԱտանա. կան եկեղեցիք
և բնակարանք ի Հաճին և ի Սիս. հիմնարկեալ է
եկեղեցին Տարսոնի. կայ բնակարան ի Մերսին։
Կուսանք Ա. Ցղութեան առաջնորդեն դպրոցի աղ-
ջկանց յԱտանա և ի Հաճին։

Ի վաղ ժամանակս կային Եպիսկոպոսարանք ի Կիլիկիա յայլ և այլ գաւառս բաժանեալք։ Յետ ԺԱ. դարուն բազմացան և Հայ Եպիսկոպոսունք. իսկ զկնի նորոգութեան կաթողիկէ Հայրապետութեան Հայոց անուանեցաւ առաջին Եպիսկոպոս յանուն Ատանոյ Գրիգոր վարդապետ Քիլիսցի, որ ձեռնադրեցաւ յամին 1774. և ապա յամին 1788. ընտրեցաւ Պատրիարք տանն Կիլիկիոյ։

Յետ եօթն և տասն ամաց պարապութեան՝ նա ինքն Գրիգոր Պետրոս Ե. յամին 1805. ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Ատանոյ զՄանուէլ վարդապետ Բերիացի աշակերտ վանաց Զմմառի, որ հանգեաւ ի Տէր յամին 1813։

Զամս եօթն ինաց աթոռն պարապեալ և ապա յամին 1820. ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Ատանոյ Ստեփանոս վարդապետ Հօլասեան անկիւրացի աշակերտ վանաց Զմմառի. և մինչև ցվախճան կենաց իւրոց վարեաց զպաշտօն աթոռակալութեան. և սրբարակրօն վարուք ննջեաց ի Տէր յամին 1861։

Եւ ոչ մի յերից Եպիսկոպոսացս գնաց և բնակեցաւ ի վիճակի իւրում. զի որպէս ասացաւն, յառաջ քան զամն 1849. չկային կաթողիկեայք ի կողմանս յայնոսիկ. և յետ այնորիկ, զի Ստեփանոս Արքեպիսկոպոս անցեալ էր զաւուրքդ. սմին իբի և փոխան նորա չոգաւ անդր առ ժամն նորընտիր Եպիսկոպոսն Աղեքսանդրիոյ Եգիպտացւոց. և ապա եկաց անդ կաթողիկոսական փոխանորդ զամս ինչ Յովհաննէս Եպիսկոպոս Հաճեան Կեսարիոյ։ Եւ զամս քսան և չորս չեղաւ ոք յանուն Ատանոյ։

Իսկ ի 24. Մայիսի յամին 1885. ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Ատանոյ Կարապետ վարդապետ Աղանեան Ատանացի աշակերտ Վանաց Զմմառի. որ յետ իբր հնգից ամաց անուանեցաւ ի 23. Սեպտ. 1896

փոխանորդ կաթողիկոսական և յորջորջեցաւ Արքեպիսկոպոս Յերապոլսի։

Յաջորդ եղև սմա Պօղոս վարդապետ Թերզեան Կուտինացի աշակերտ ուրբանեան դպրոցի, որ ձեռնադրեցաւ յ8. Ապր. 1892. և վարէ զաթոռ իւր յաջողութեամբ մինչև ցայսօր։

Ընտրելագոյն Մասն Աթոռոյն Սսոյ է վիճակն Ատանայ, որ յառաջագոյն բաժանեալ էր յեօթն մասունս կամ թեմս, որք էին Ատանա, Տարսոն, Մերսին, Սիս, Հաճին, Ճէպէլը Պէրէքէթ, և Փայաս։ Իսկ այժմ կաթողիկոսն ամփոփեալ է յերիս միայն. Ա. Հաճին. Բ. Սիս և որ շուրջ գնովաւ և ընդ նմա Ճէպէլը–Պէրէքէթ։ Գ. Ատանա որ ընդ սանճագացն Իչ–էլիսի, և Մերսնի կազմեալ է ի մի թեմ։

ԺԲ.

ՎԻՃԱԿՆ ԿԵՍԱՐԻՈՅ

Բովանդակէ յինքեան զԱնճագն Կեսարիա և զայլ քանի մի տեղիս կուսակալութեան Անկիւրիոյ. ևս և զկուսակալութիւնն Գոնիայի անթերի։ Ի գաւառին Կեսարիոյ և յայլ յարակից տեղիս մեծ է բազմութիւն այլազգեաց, են և Հայք ոչ սակաւք, այլ և Յոյնք։ Իսկ ի Գոնիա Թուրք է մեծագոյն մասն բնակչաց. գտանին Յոյնք և Հայք։

Սակաւ են կաթողիկեայ Հայք, որք բնակին ի Կեսարիա, ունին Եկեղեցի Մեծ և առաջնորդարան. կան և այսր անդր կաթողիկեայք նուազ թուով, որք չեն տակաւին կարգաւորեալք։

Կարի սակաւ են Յոյն կաթողիկեայք, որք ունին քահանայ առաքեալ ի Կ. Պոլսէ. ունին առաքելութիւն և դպրոց Յիսուսեան Հարք. այլ չկայ լատին ժողովուրդ։

Հռչակեալ էր Աթոռն Կեսարիոյ ի հնումն, ունելով իւր վեցերորդապետ հիւսիսային փոքուն Ասիոյ հանդերձ ԺԳ. մետրապոլտութեամբք։ Առ Հայս ընդ իրաւասութեամբ Աթոռոյն Սսոյ էր ժամանակս բազումս։ Աբրահամ Պետրոս Ա. և յաջորդք նորա չկամեցան անուանել զոք յանուն նորա. զի և ոչ զոյր անդէն կաթողիկեայ ժողովուրդ։ Սակայն Գրիգոր Պետրոս Ա. ձեռնադրեաց զՄիքայէլ վարդապետ Բրգնիքցի աշակերտ վանաց Զմմառի զայր ականաւոր, և առաքեաց իսկ զնա յետ ամաց ինչ ի Սեբաստիա իբր կաթողիկոսական փոխանորդ, հոգ տանել ի մօտոյ և վիճակին Կեսարիոյ։ Ընտրեցաւ սա յամին 1844. Պատրիարք Տանն Կիլիկիոյ։

Եւ յետ վեցից ամաց անուանեաց եպիսկոպոս Կեսարիոյ զՅովհաննէս վարդապետ Հաճեան Բրգնիքցի աշակերտ վանաց Զմմառի, և ձեռնադրեցաւ յամին 1850։ Սա եկաց զամս բազումս յԱտանա իբր փոխանորդ կաթողիկոսական. և զժամանակ մի ի վանս Զմմառի իբր Աթոռակալ։ Եւ զի սկսեալ էին ոմանք ի Կեսարացւոց միաբանիլ ընդ Ս. Եկեղեցւոյ. չոգաւ ի վիճակ իւր. և հանգեաւ ի Տէր ի 18. Մայի. 1880։

Յաջորդ եղև սմա Պօղոս վարդապետ Լիմմանուէլեան, որ ձեռնադրեցաւ ի 26, Օգոստ. 1884։ Առ սովաւ աւարտեցաւ շինութիւն եկեղեցւոյ քաղաքիս։ Եւ ի 24. Յուլի. 1899. ընտրեցաւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ։

Յետ որոյ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն Մատթէոս վարդապետ Սիպլեան Մարաշցի. որ ձեռնադրեցաւ ի 10. Նոյեմբ. 1901. և վարէ զայն մինչև ցայսօր։

Առ էջմիածնականս երկու են թեմք Կեսարիոյ. և նորոգ հաստատեալ թեմն Գոնիոյ, որ յինքն գրաւէ զկուսակալութիւն համանուն։

ԺԳ.

ՎԻՃԱԿ ԱՆԿԻՒՐԻՈՅ

Հնաւուրց են կաթողիկեայք ի քաղաքին և զնոսվաւ. և ի վերջին դարս եկաց անդ յաջորդութիւն եպիսկոպոսաց ի միութեան ընդ եկեղեցւոյ սրբոյ, որ ապա դադար կալաւ զժամանակ մի։

Վիճակս այս ծաւալի ի մեծ մասն կուսակալութեան Անկիւրիոյ և ի բոլորն Քաստամունի։ Բազմաթիւ յոյժ են ի բնակիչսն, թուրք Մահմետականք. կան Հայք և Յոյնք։

Մեծ է թիւ կաթողիկեայ Հայոց ի գլխաւոր քաղաքին, ուր ունին զչորս եկեղեցիս հոյակապս, ունի կուսաստան, որ պարապի ի դաստիարակութիւն աղջկանց. զպրոցս, բազմութիւն քահանայից և որ ինչ այլ կարևոր իրք ի յառաջադիմութիւն։

Կան կաթողիկեայ Հայք ևս յԻնէպօլի. ի Բէրէտէ ի Պօլու և այլուր, որք գաղթեալ են յԱնկիւրիոյ, գտանին և յԵօզգատ և ի սահմանս նորա ոմանք նորոգ միացեալք, որոց արդ նուազեալ է թիւ։

Յամին 1850. յամսեանն Ապր. 30. հաստատեցաւ Եպիսկոպոսութիւնն Անկիւրիոյ, և ընտրեցաւ ի նոյն Աթոռ Անտոն–Կղեմէս Շիշմանեան. ձեռնադրութիւնն կատարեցաւ ի 20. Յունի. յամին 1850. այր էր սա հոյակապ, որ պայծառացոյց զիւր վիճակ, և հանգեաւ ի Տէր յամին 1863։

Յաջորդ եղև սմա Յովսէփ վարդապետ Առաքելեան աշակերտ Ուրբանեան դպրոցի, որ ի 22. Դեկտ. 1863. փոխադրեցաւ անդը ի Տրապիզոնէ. և անդ հանգեաւ ի Տէր։

Յետ սմաց ինչ ի նոյն Աթոռ ընտրեցաւ Կարապետ վարդապետ Առաքելեան ի 14. Օգոստ. 1877. և ձեռնադրեցաւ ի 23. Սեպտ. նոյն ամի։ Այլ զի անցեալ էր զաւուրքք, հրաժարեալ առանձնացաւ ի Կ. Պոլիս. և փոխան նորա եղաւ կարգաւոր իշխանութեամբ առաջնորդ Յովհաննէս Ծ. Վ. Հօլասեան։ Իսկ Կարապետ եպիսկոպոս վախճանեցաւ ի Կ. Պոլիս ի 27. Ապր. 1889. ի հասակի ութսուն և հինգ ամաց։

Ապա յԱթոռոյն Մշոյ անդը փոխադրեցաւ յամին 1890. Յովհաննէս Եպիսկոպոս Յովհաննէսեան. և վախճանեցաւ անդ յամին 1899։

Եւ յետ սմաց ընտրեցաւ Կղեմէս վարդապետ Ղազարոսեան, որոյ ձեռնադրութիւնն եղև ի 10. Նոյեմբ. 1901. և վարէ զաթոռն զայն մինչև ցայսօր։

Երեք թեմք են Հայոց բաժանելոց ի վիճակիս յայսմիկ. Ա. Անկիւրիա, որ յառաջն ընդարձակ յոյժ էր. և այժմ ամփոփեալ ի գլխաւոր մասն Վիլայէթին. Բ. Նորահաստատ Թեմն Քաստէմանիի։ Եւ ի Եօզղատ. որ պատկանի Աթոռոյն Սսոյ։

ԺԴ.

ՎԻՃԱԿՆ ՊՐՈՒՍԱՅԻ

Բովանդակէ յինքեան զմեծ Վիլայէթն Խուտավեն տիկեաբ. որ է հինն Բիւթանիա, մասամբ Փռիւգիոյ և Հելեսպոնտեան Միւսիոյ։ Պրուսա կայ ի կեդրոնի, ուր նստի Եպիսկոպոսն, և են ընդ իշխանութեամբ նորա Բէօթահեա, Պիլէճիկ, Թիւրքմէն, և այլ ևս տեղիք. Պրուսա, Բէօթահեա և Պիլէճիկ ունին եկեղեցիս և դպրոցս. կայ յառաջինն և եպիսկոպոսական։ Իսկ Իզնիմիտ, Պահչէճիկ և այլ տեղիք շուրջ զնոքօք, պատկանին արդ Աթոռոյն Կ. Պոլսի։

Բազմութիւն ընակչացն Մահմետական են, կան ևս Հայք և Յոյնք. ևս Լատինք սակաւք իւրեանց քարոզչօք։

Եպիսկոպոսութիւն քաղաքիս հաստատեցաւ յ30. Ապր. 1850. և ընտրեցաւ առաջին Եպիսկոպոս Գրիգոր վարդապետ Պահատուրեանն որ ձեռնադրեցաւ ի 23. Օգոստ. 1850. և հանգեաւ ի Տէր։

Յաջորդ եղև սմա Պետրոս վարդապետ Թիլքեան, որ ընտրեցաւ ի 23. Օգոստ. 1858. ձեռնադրեցաւ յամին 1859. ի քանի մի նուագս յանձն եղև սմա տեղապահութիւն Պատրիարքական Աթոռոյն բացակայութեան Պատրիարքին. և վախճանեցաւ (հ. ա.) Մայի. 1885. ի հասակի 76. ամաց կենացն։

Կամք եղեն ապա դնել ի տեղի նորա զՅովհաննէս վարդապետ Հօլասեան Կ. Պոլսեցի. այլ չև ընտրու-

թեանն ի գլուխ երեալ եհաս վախճան կենացն։ Ուստի և Յարութիւն Ճամճեան, որ ի 16. Սեպտ. 1884. հրաժեշտ տուեալ էր Եպիսկոպոսութեան Մշոյ, կարգեցաւ ի 1. Յունի. 1886. Եպիսկոպոս Պրուսայի, զոր վարէ մինչև ցայսօր։

Իսկ Հայ Էջմիածնականք ունին թեմս վեց, Պրուսա, Պիլէճիկ, Կուտինա – Աֆիոնգարահիսար, և Պանտերմա – Պալըքէսրի։

Կ. ՊՕԼԻՍ ԵՒ ՈՐ ԶՆՈՎԱՒ

Պատրիարքն Կիլիկիոյ ունի հաստատուն բնակարան ի Կ. Պոլիս, զոր վարէ կարգաւոր իրաւարանութեամբ, և սահմանք պատկանեալք նմին են յԱսիական Տաճկաստանի Իսկիտար մինչև ի Նիկոմեդիա՝ փաղառութեամբ նահանգին, յորում գտանին Պարտիզակ, Եուվանըք, Սապանճա, Սթանքէոյ, Ասլանպէյ, և Տէօնկէլ։ Եւ յանցից Կ. Պոլսի մինչև ցգետն Զաքարիա, որ հոսի ի Սեաւ Ծով։ ՅԵւրոպական Տաճկաստանի երևելի քաղաք են Ռոտոսթօ, Լյուլիբուրկ, Սալոնիկ են։

Լիբանան՝ յորում են Զմմառ կեդրոն՝ համանուն Միաբանութեան. և Պէյթիաշլոյ պատկանեալ Անտոնեան ուխտի, Վերիտոն և Դամասկոս, յորս են եկեղեցիք ընդ Տրիպոլսի և Լաւոդիկեայ, և Երուսաղէմ ընդ Պաղեստինի և կղզին Կիպրոս, պատկանին կաթողիկոսական իրաւասութեան։

Կաթողիկեայ Հայք Կ. Պոլսի Ճեցին զժամանակ մի ընդ իշխանութեամբ Լատին Առաքելական փոխանորդի քաղաքին, և էր նորա եպիսկոպոս մի հայ կաթողիկեայ, իբր փոխանորդ նորին վասն Հայոց. և ունէր ի վերայ սոցա իրաւասութիւնս ինչ հաղորդեալս յառաջնոյն։

Ապա յամին 1830. ի 6. Յուլի. Քահանայապետն Պիոս Ը. կանգնեաց զգահերէց Արքեպիսկոպոսութեան Հայ կաթողիկեայց ի Կ. Պոլիս. և առաջին Գահերէց Արքեպիսկոպոս եղև Անտոն Վ. Նուրիճան, և իրաւասութիւն սորա տարածէր ի կողմանս Փոքուն Ասիոյ և Հայոց Մեծաց. բայց առանց վնասելոյ իշխանութեան պատրիարքին Կիլիկիոյ, վասն ամենայն տեղեաց որք ունէին կախումն զայնմ Աթոռոյ: Անտոն վարդապետ ընկալաւ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան ի 11. Յուլի. նոյն ամի ի Ծուռլա կարդինայէ. այլ զի հպատակ էր նա կայսերութեան Աւստրիոյ, ոչ ծանեաւ զնա Պետութիւնն Օսմանեան: Եւ ի հարկէն ստիպեցան կարգել Ազգապետս կամ արքունի Պատրիարքս, որք յաջորդեցին զմիմեանս մի զմիոյ կնի, ըստ օրինի ժամանակաւոր պետաց: Իսկ հոգևորական իշխանութիւնն մնաց ի ձեռս Գահերէց Արքեպիսկոպոսին:

Յաջորդ եղև սմա յամին 1838. Պողոս վարդապետ Մարուշ Արքեպիսկոպոսն Բաղկիդեայ և անուանեցաւ Գահերէց Արքեպիսկոպոս Կ. Պոլսի, զոր վարեաց զամս ութ և հանգեաւ ի Տէր յ2. Օգոստ. 1846:

Կալաւ զԱթոռն փոխանորդ նորա Անտոն վարդապետ Հասուն Արքեպիսկոպոս Անարզաբայ իրաւամբ յաջորդութեան յ3. Օգոստ. նոյն ամի:

Իբրև ի սկիզբն 1866. ամի փոխեցաւ յաստեաց Գրիգոր Պետրոս Ը. գումարեցան ի ժողով ընտրութեան եպիսկոպոսունք Կիլիկիոյ ի 14. Սեպտ. նոյն ամի. և ընտրեցին զԳահերէց Արքեպիսկոպոսն Կ. Պոլսի ի Պատրիարք Տանն Կիլիկիոյ. յ13. Յուլի. 1867. տուաւ հաստատութիւնն և վերարկուն հայրապետական իշխանութեան՝ առանձինն Քահանայապետական Կոնդակաւ, յորում գրէ այսպէս Սրբազան

Քահանայապետն Պիոս Թ, «Առաքելական ճոխութեան, որ տուեալ է մեզ յընդհանուր եկեղեցին՝ պատճէնիւ կոնդակիս այսորիկ ընչեմք եղծանեմք զնախագահական և զԱրքեպիսկոպոսական յորջորջումն, որով... Պիոս նախորդն մեր՝ իւրով առաքելական թղթով զեկեղեցի Հայոց Կ. Պոլսի զարդարեաց: Ապա և նովին իշխանութեամբ զեկեղեցական գաւառ Կ. Պոլսի Հայոց ի մշտնջենաւորս յարեմք ի Պատրիարքութիւն Կիլիկիոյ. պատուէր տուեալ զի Պատրիարքն նոր և յաջորդք նորա վարեսցին յորջորջմամբ Պատրիարքաց Կիլիկիոյ Հայոց. և զի բնակութիւն նորա լիցի ի Կ. Պոլիս քաղաքի. և զեկեղեցի Կ. Պոլսի կարգաւոր իրաւաբանութեամբ վարեսցեն. կամիմք իսկ՝ զի ի վերոյ գրեալ Պատրիարքութիւնն ամփոփեսցի ընդ սահմանօք, զոր այժմ Կիլիկիոյ Պատրիարքութիւնն և Կ. Պոլսի Նախահութիւնն ունին»:

Եւ ըստ այսմ վճռոյ՝ նստան այնուհետև Պատրիարքունք Կիլիկիոյ ի Կ. Պոլիս մի զմիոյ կնի. և են.

Անտոն Պետրոս Թ. 1866–1880.
Ստեփանոս Պետրոս Ժ. 1881–1899.
Պօղոս Պետրոս ԺԱ. 1899–1904.
Պօղոս Պետրոս ԺԲ. 1904.

որ արդ վարէ զԱթոռն զայն:

Եկեղեցին Կ. Պոլսի ընդարձակ ունի սահման երկուստեք յԱսիա և յԵւրոպէ. և են ի նմա եօթն և տասն եկեղեցիք և երեք մատրունք, մեծասան դպրոցք պատանեաց և ինն աղջկանց. արժանի յիշատակութեան է վարժարանն Ս. Լուսաւորչի, որպէս և այլք ոմանք: Փակեալ է ի ժամանակէ հետէ կղերանոցն. յառաջադէմ զարգանայ Միաբանութիւն կուսանաց Անարատ Յղութեան, որ ունի միայն ի Կ. Պոլիս

չորս վանորայս, թող զայնոսիկ՝ որք ի գաւառսն են։ Մեծաշէն է կաթողիկոսարանն, և առ այլ ևս եկեղեցեօք գտանին բնակարանք։

Հայ Էջմիածնականք ի վեց թեմս բաժանեալ են զվիճակն Կ. Պոլսի. յԱսիակողմն են Նիկոմիդիա և Աւտարազար. ի միջակին կայ Կ. Պոլիս և որ շուրջ զնովաւ և որ ընդ իշխանութեամբ նորին. յԵւրոպական կողմն են երկու վիճակք, որք միացեալ են ընդ միով Առաջնորդաւ, այն է՝ Ռոտոսթօ և Լտիրնէ։

ԶՄԻՒՌՆԻԱ

Ընդ իշխանութեամբ Կ. Պոլսի գտանի և Զմիւռնիա, որ ունի ընդ իւրև զՎիլայէթն Այտրն։ Յամին 1882. կարգեցաւ անդ փոխանորդ մի Պատրիարքական հրովարտակաւ Օսմանեան կայսեր ի կարգաւորութիւն վարչական գործոց կաթողիկեայց. սակայն և այնպէս հոգևորական խնամք հաւատացելոց պատկանէին Արքեպիսկոպոսին Լատինաց։

Ապա բարձր հրամանաւ Լևոնի ԺԳ. Քահանայապետի յամին 1894. բաժանեցան Հայ կաթողիկեայք յիրաւաբանութենէ լատին Արքեպիսկոպոսին, և տուան Պատրիարքին Կիլիկիոյ, որ Առաջնորդ Զմիւռնիոյ կարգեաց զՀ. Նիկողայոս Ծ. Վ. Աւգերեան, կայսերական հրովարտակաւ։

Յ17. Սեպտ. 1894. եհաս առաջնորդն ի Զմիւռնիա, որոյ իշխանութիւն տարածի ի վերայ Հայ կաթողիկեայց բովանդակ կուսակալութեան Այտնի. մինչև ցԲայավալըգ, Սոմա, Տինէյ, Պալտուր, Ուշագ. են։

Թիւ Հայ կաթողիկեայց ի կուսակալութեան Այտնի էր ի սկզբան անդ 150–160 տուն յորոց 70-80.

տուն բնակէին ի Զմիւռնիա և ի մերձակայ գիւղօրէս նորին. այլ այժմ բազմացեալ են եկօք ի Կ. Պոլսէ, յԱնկիւրիոյ, յԱտանոյ և յայլեաց տեղեաց։

Ի պատիւ Ծննդեան Ս. Աստուածածնի նուիրեալ է եկեղեցին կաթողիկեայց ի վանատան Մխիթարեանց Վիեննայ։

Մեծ է թիւ բնակչաց Այտնի. առաւելագոյն մասամբ Մահմետականք են. գտանին և Յոյնք ոչ սակաւք, որք ի գլխաւոր քաղաքին ունին 12. եկեղեցիս։ Են և Լատինք ոչ սակաւ, որ ի Զմիւռնիա ունին 6. եկեղեցիս. թիւ Հայ Էջմիածնականաց ի համօրէն վիլայէթին է իբր 14,000. և են նոցա կրկին եկեղեցիք, Ս. Ստեփանոս աթոռանիստ և Ս. Լուսաւորիչ. կան ի գաւառին և այլ եկեղեցիք, այլ մի է Առաջնորդութիւնն։

ԺԶ.

ՎԻՃԱԿՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՅԵԳԻՊՏՈՍ

Եպիսկոպոսութիւն Հայոց յԵգիպտոս չէ նոր. և առաջին եղև Գրիգորիոս հօրեղբայր Շնորհալի Հայրապետին. զոր Վկայասէրն մեծ ձեռնադրեաց յամին 1076. Արքեպիսկոպոս Եգիպտոսի. որոյ յաջորդ եղև Անանիա. և տեսեաց յաջորդութիւն սոցա այնուհետև ընդ երկայն ժամանակ։

Յետ նորոգութեան կաթողիկոսական Աթոռոյն ի Կիլիկիա առաջին եկաց Եպիսկոպոս Եգիպտոսի Պօղոս Վարդապետ Աթէրեան կարնեցի աշակերտ վանաց Զմմառի։ Ձեռնադրութիւն սորա եղև ի Պզոմ-

մառ յամին 1849. ի Գրիգոր Պետրոս Ը. կաթողի-
կոսէ. և յամին 1866. հանգեաւ ի Տէր։

Զամս իբր քսան պարապ մնաց Աթոռն, նախ ընդ
փոխանորդութեան Ստեփան վարդապետի Անուանեան,
և ապա այլոց ոմանց. և յայս միջոց ժամանակի
փոյթ կալան դնել զոք Եպիսկոպոս, այլ ոչ յաջո-
ղեցաւ։

Ապա յամին 1886. յ2. ամսեանն Մայիսի ձեռ-
նադրեցաւ եպիսկոպոս Աղեքսանդրիոյ Եգիպտացւոց
Բառնաբաս վարդապետ Ագշէհիրլեան Կ. Պոլսեցի
աշակերտ Ուրբանեան զպրոցի. և հանգեաւ ի Տէր։

Եւ յետ ինչ ինչ դիպաց, ընտրեցաւ ապա Պօղոս
Վարդապետ Սապպաղեան Բերիացի աշակերտ Վա-
նաց Զմմառի, որ ի 10. Նոյեմբ. 1901. ձեռնադրե-
ցաւ Եպիսկոպոս. և ի 4. Օգոստ. 1904 ամբարձաւ
յԱթոռ Պատրիարքական. որով և դարձեալ պարապ
մնաց վիճակն Աղեքսանդրիոյ։

Թիւ ժողովրդեանն աճէ գաղթականօք, որք յայլ
և այլ կողմանց գնան անդր և են արդ կաթողիկեայց
երեք եկեղեցիք, մին յԱղեքսանդրիա, և Ս. Գրիգոր
Լուսաւորիչ ի Գահիրէ, և Ս. Աստուածածին ի հին
քաղաքին։

Առաւել է թիւ Էջմիածնականացն Հայոց. զի յա-
ճախեն անդր բազումք յայլոց տեղեաց։ Եւ առ նոսա
իսկ միմիայն է Թեմ Եգիպտոս համօրէն։

ԱՐԴՈՒԻՆ ԵՒ ՍՊԱՀԱՆ

Են այլ ևս երկու վիճակք կաթողիկեայ Հայոց
այն է՝ Արդուին և Սպահան։

Եպիսկոպոսութիւն առաջնոյն որոշեցաւ ի Պիոսէ
Թ. յ30. Ապր. 1850. և ի նմին ամի ի 25. Յու-
նի. (հ. տ.) ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Տիմոթէոս

Վարդապետ Աստուածի, աշակերտ վանաց Զմմառի։ Զեղև սմա ժամանակ երթալոյ ի վիճակ իւր, կանխեալ օրհասին ի Կ. Պոլիս ի 14. Մարտի (հ. տ.) 1851։

Պարապ մնաց Աթոռն զամս ութ. և ապա ընտրեցաւ Անտոն վարդապետ Հալաճեան Անկիւրացի աշակերտեալ ի վանս Զմմառի. ձեռնադրեցաւ սա Եպիսկոպոս ի 15. Ապր. 1859. և պայծառացոյց զեկեղեցին Արզուինոյ. և ապա առ սաստիկ ծերութեան հրաժարեալ առանձնացաւ ի Կ. Պոլիս և անդ կնքեաց զկեանս իւր։

Յետ հրաժարելոյ նորա անցին ամք քանի մի. և ապա ընտրեցաւ Եպիսկոպոս Արզուինոյ Յովհաննէս վարդապետ Զաքարեան Արզուինցի. որ առանձինն տնօրէնութեամբ ձեռնադրեցաւ յԱրզուին յեպիսկոպոսէն Կարնոյ յամի 1878. և յետ սակաւ ամաց հանգեաւ ի Տէր։

Եւ ցարդ չեղաւ փոխան նորա այլ Եպիսկոպոս. և վիճակն յանձանձի փոխանորդովք։

Հայ կաթողիկեայք բազմաթիւ են ի քաղաքին Արզունոյ իբր 6000. ոգիք, որոց են չորս եկեղեցիք, Ս. Աստուածածին, Ս. Պետրոս, Ս. Լուսաւորիչ և Ս. Խաչ։ Ունի Եպիսկոպոսարան, և զպրոցս առ իւրաքանչիւր Եկեղեցեօք։ Էջմիածնականք են ի սմա 1300. ոգիք և եկեղեցի նոցա նուիրեալ է Ս. Աստուածածնի։

Են բազմութիւն կաթողիկեայ Հայոց յԱրտանուճ, յԱտտահան, ի Տանձոտ, ի Սաթլէէլ, ի Բղխիկուր. և յայլ ևս գիւղօրէս. և ըստ այսմ թիւ կաթողիկեայց հասանէ այժմ իբր ի 14,000 ոգիս։

Իսկ ի Սպահան չեկաց եպիսկոպոս առանձին, այլ վարեցին զայն փոխանորդք մինչև ցայսօր։

Էջմիածնականաց են երկու թեմք, Ատրպատական, որ ամփոփի ի նմին գաւառի. և Սպահան, զորմէ կախին ևս և Հայք Հնդկաց և սահմանաց նորին։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Եպիսկոպոսունք ձեռնադրեալք ի վերայ քաղաքաց ոմանց, որք խառնեցան ապա ի մերձաւոր վիճակս, կամ ի կիր արկան իբր յորջորջումն։

Սահակ վարդապետ ձեռնադրեալ Եպիսկոպոս Քիւլիսի յամին 1740. ի Բերիա յԱբրահամ Աբքեպիսկոպոսէ Քաղաքին, որ անցոյց զժամանակ կենաց իւրոց ի Գրէմ և ապա ի Զմմառ, ուր և ննջեաց ի Տէր։

Յովսէփ Վարդապետ Ահէմեան ձեռնադրեալ Եպիսկոպոս Եդեսիոյ յԱբրահամ Պետրոս Ա. կաթողիկոսէ յամին 1749. որ գնացեալ ի Հռովմ կարգեցաւ ձեռնադրիչ Եպիսկոպոս. և վախճանեցաւ ի քաղաքի անդ։

Պօղոս Վարդապետ Կ. Պոլսեցի աշակերտ Անտոնեանց ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Դամասկեայ յԱբրահամ Պետրոս Ա. կաթողիկոսէ։

Պետրոս Վարդապետ Բեռորդի նորին Աբրահամու, որ ձեռնադրեցաւ ի նմանէ Եպիսկոպոս Անթափ քաղաքի յամին 1749. և վախճանեցաւ ի Վերիտոն։

Բարսեղ Վարդապետ Աւգատեան Բերիացի ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Ամասիոյ յամի 1753. և մնաց ի վանս զամս բազումս. և ապա յամին 1780. ընտրեցաւ Պատրիարք Տանն Կիլիկիոյ։

Պօղոս Վարդապետ Լէոնեան Ախալցխացի աշակերտ ուրբանեան դպրոցի ձեռնադրեցաւ ի Միքայէլ Պետրոս Գ. կաթողիկոսէ եպիսկոպոս Տայոց աշխարհին կամ Ախալցխայ, որ ապա եղև ձեռնադրիչ Եպիսկոպոս ի Հռովմ։

Յովհան Վարդապետ Ամդեցի. ձեռնադրեցաւ ի նոյն կաթողիկոսէ Եպիսկոպոս Զմիւռնիոյ. և հանգեաւ ի Կ. Պոլիս։

Պողոս Վարդապետ Գուլպէյեան ձեռնադրեցաւ ի նոյն կաթողիկոսէ Եպիսկոպոս Դամասկեայ, որ առաքեցաւ Յեգիպտոս, և դարձեալ ի վանս Զմմառի հանգեաւ ի Տէր։

Յակոբ Վարդապետ Հօլասեան ձեռնադրեցաւ ի Գրիգոր Պետրոս Ե. կաթողիկոսէ Եպիսկոպոս Ամասիոյ յամին 1806. որ մնաց ի վանս. և վարէր առ յաջորդով նորա զպաշտօն Աթոռակալութեան, ընտրեցաւ և սա Պատրիարք Կիլիկիոյ յամին 1841։

Յովհան Վարդապետ Կիրակոսութեան Եւդոկիացի աշակերտ վանաց Զմմառի ձեռնադրեցաւ յամին 1812. Եպիսկոպոս Դամասկոսի։

Իգնատիոս Վարդապետ Քալըպճեան Եւդոկիացի ձեռնադրեցաւ Եպիսկոպոս Ամասիոյ յամին 1842. սա վարեաց զփոխանորդութիւն Աթոռոյն Սեբաստիոյ զամս բազումս, և չոգաւ յԱմասիա և ընդ նմա ոմանք ի միաբանից և Ջանացան զամս ինչ ի դարձ ժողովրդեան յԱմասիա, ի Մարսուան, ի Կամուրջ ևն։ Ապա յանձնեցաւ գաւառդ այդ Եպիսկոպոսին Տրապիզոնի։

Միքայէլ Վարդապետ Աղեքսանդրեան Կիւրինցի աշակերտ վանաց Զմմառի ձեռնադրեցաւ յամին 1855. Արքեպիսկոպոս Երուսաղեմի։

Բարսեղ Վարդապետ Գասպարեան Բերիացի աշակերտ Զմմառի ձեռնադրեցաւ Արքեպիսկոպոս Կիպրոսի, և Սուքիաս Վարդապետ Քազանճեան Կ. Պոլսեցի Աբբահայր Անտոնեան ուխտի Արքեպիսկոպոս Անտիոքայ. և ապա Սէլիմպրիոյ։

Ստեփանոս Վարդապետ Ազարեան Կ. Պոլսեցի աշակերտ ուրբանեան դպրոցի կարգեցաւ Աթոռակալ

Պատրիարքական և ձեռնադրեցաւ Արքեպիսկոպոս Նիկոսիոյ ի 23. Սեպտ. 1877. որ ապա յամին 1881. ընտրեցաւ Պատրիարք Կիլիկիոյ։

Յովհան Վարդապետ Բիւբէլեան Ամդեցի որ ձեռնադրեալ էր Եպիսկոպոս ամօք ինչ յառաջ՝ անուանեցաւ Եպիսկոպոս Աստալիոյ։

Մովսէս Վարդապետ Ամպէրպօյեան անուանեցաւ Եպիսկոպոս Գրոնիոյ։

ՁԵՌԱՆԱԴՐԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՔ Ի ՀՌՈՎՄ

Գրիգոր Արքեպիսկոպոս Եդեսիոյ ձեռնադրեալ ի Նահապետ կաթողիկոսէ Էջմիածնի չորս ի Հռովմ. և յամին 1713. կարգեցաւ ձեռնադրիչ Եպիսկոպոս աշակերտաց Հայ Ծիսի։ Հանգեաւ ի Տէր յամին 1721։

Փոխանորդ եղև սմա Վրթանէս Արքեպիսկոպոս Կեսարիոյ Միսբան Էջմիածնի և ապա յամին 1721. յաջորդ. և եղեն կեանք նորա հարիւր ամք։

Յովսէփ Արքեպիսկոպոս Եդեսիոյ Աճէմեան Բերիացի ձեռնադրեալ յամին 1749 ի Լիբանան. գնացեալ ի Հռովմ յաջորդեաց Վրթանէս Արքեպիսկոպոսի յամին 1760. և հանգեաւ ի Տէր 1767։

Սիմոն Եպիսկոպոս Անկիւրիոյ, որ դարձեալ էր յուղիղ հաւատս քարոզութեամբ Յակոբ Վարդապետ (որ ապա Պետրոս Բ.), անուանեցաւ ձեռնադրեալ Եպիսկոպոս ի Հռովմ յամին 1767։

Յետ մահու սորա էառ զնոյն պաշտօն յամին 1774. Սամուէլ Եպիսկոպոս Բիւթանիոյ կամ Պրուսայ, որ դարձ արար անդրէն ի վիճակ իւր։

Եւ կարգեցաւ փոխան նորա յամին 1781. Պօղոս Վարդապետ Լէոնեան Արքեպիսկոպոս Ախալցխա որ ձեռնադրեալ էր ի Զմմառ։

Յաջորդեաց զսա յամին 1785 Ստեփանոս Եպիս-
կոպոս Աֆթանտիլ Ախալցխացի։

Եւ յետ սորա յամին 1796. Աթանաս Արքեպիս-
կոպոս Սարաֆեան յԱնտոնեան ուխտէ։

Իսկ յամին 1824. կարգեցաւ ի նոյն պաշտօն
Գրիգոր Արքեպիսկոպոս Բաղինեան, որոյ
Օգնական եղև Պօղոս Վարդապետ Մարուշեան որ
ձեռնադրեալն էր Արքեպիսկոպոս Քաղկիդոյ, յամին
1832–1838։

Յամին 1830. թողին ձեռնադրիչ Եպիսկոպոսունքս
զՍ. Մարիամ Եգիպտացի, և տուաւ նոցա ի Գրի-
գոր ԺԶ. Քահանայապետէ Ս. Վլաս ուր ընակեցաւ
Պօղոս Եպիսկոպոս Մարուշեան։

Ապա յամին 1838. ընտրեցաւ Իգնատիոս Վար-
դապետ Փափազեան ի Մխիթարեան ուխտէ և անուա-
նեցաւ Արքեպիսկոպոս Տարօնոյ, որ հանգեաւ ի Տէր
յամին 1852. ի 23. Մայի։

Օգնական եղեալ էր սմա յամին 1847. Եղուարդ
Վարդապետ Հիւրմիւզեան ի Մխիթարեան ուխտէ
Վենետկոյ, որ ձեռնադրեալ անուանեցաւ Արքեպիս-
կոպոս Շիրակայ. և յամին 1852. յաջորդեաց զնա.
հանգեաւ ի Տէր 23. Հոկտ. յամին 1876։

Ի նմին 1876. ամի ընտրեցաւ Աղեքսանդր Վար-
դապետ Պալճեան ի Մխիթարեան ուխտէ Վիեննայ,
որ ձեռնադրեալ անուանեցաւ Արքեպիսկոպոս Տրոիոյ,
հանգեաւ ի Տէր, յամին 1884։

Յետ սորա նստաւ ի նոյն աթոռ Յովհան Վարդապետ
Հիւրէլեան Արքեպիսկոպոս Ատալիոյ յամին 1885.
հանգեաւ ի Տէր 1901։

Եւ եղև օգնական սմին Յարութիւն Վարդապետ
Յուպեան, որ ձեռնադրեալ կոչեցաւ Արքեպիսկոպոս
Ամասիոյ ի 24. Փետր. 1900. և յամին 1901.
կարգեցաւ ձեռնադրիչ Եպիսկոպոս, մինչև ցայսօր։

ԱԲԲԱՀԱՐՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

Ծնաւ ի Սեբաստիա յամին 1676. քահանայացաւ յամին 1696. սկիզբն առնէ Միաբանութեան յամին 1701. և լինի Աբբահայր 1712. առաքէ զաշակերտս իւր ի Նէապոլիս Պեզոպոնեսաց. և ինքն իսկ հասեալ անդր, կանգնէ մենաստան ի Մեղոն: Իսկ յամին 1715. փոխադրի ի Վենետիկ և ընդունի զՍ. Ղազար կղզեակն յամին 1717. ինքնին կառուցանէ զվանս: Եւ առաքինական վարուք ննջէ զքուն արդարոց սրբակրօն վարուք ի 27. Ապր. 1749. ի հասակի 76 ամաց:

Ստեփանոս Մելգոնեան Կ. Պոլսեցի: Ընտրեցաւ Աբբահայր ի 5 Ապր. 1750. սա հիմնէ զտպարանն. առ սովաւ եղև բաժանումն ոմանց ի Հարց. որք նախ ի Դրիեստ և ապա ի Վիեննա հաստատեցին ուխտ ուրոյն յանուն նորին Մխիթարայ մինչև ցայսօր. վախճանեցաւ յամին 1799:

Ստեփանոս Քիւվէռ Ագոնց: Ծնաւ ի Ճուրճով Դրանսիլվանիոյ յամին 1740. և եմուտ ի կրօն Մխիթարեանց 1757. քահանայացաւ յամի 1763. ընտրեցաւ Աբբահայր յամին 1800. և յամին 1804. օծաւ Արքեպիսկոպոս յորջորջմամբ Սիւնեաց. և հանգեաւ ի Տէր յամին 1824: Այր էր սա ազնուատոհմ

և աղէտք և յաջողութիւնք փայլեցուցին զկեանս նորա։

Սուքիաս Սոմալ։ Ծնեալ ի Կ. Պոլիս 1776. քահանայացաւ 1804. ընտրեցաւ Աբբահայր յամին 1824. և օծաւ Աբքեպիսկոպոս 1826. և փոխեցաւ յաստեացս յամին 1846։

Գէորգ Հիւրմիւզ։ Ծնաւ ի Բիւզանդիոն յամին 1797. ձեռնադրեցաւ քահանայ 1819. Ընտրեցաւ Աբբահայր յամին 1846. և ի նմին ամի օծաւ Աբքեպիսկոպոս յորջորջմամբ Սիւնեաց. առաջիկայ զբաւաւ յամին 1869. Պատրիարքական Սինհոդուին, որ գումարեցաւ ի Բերա Կ. Պոլսի, ընդ որում էր և եղբայր նորա Եղուարդ Աբքեպիսկոպոս Շիրակայ, ննջեաց ի Տէր յամին 1876։

Իգնատիոս Կիւրեղ։ Ծնաւ սա յամին 1834. Փեսոր. ընկալաւ զքահանայութեան յամին 1854. ընտրեցաւ Աբբահայր յամին 1876. և օծաւ Աբքեպիսկոպոս յամին 1877. զրող ծանօթութեանս մաղթէ նմա զամս երկայնս և երջանիկս. և Միաբանութեանս Մեծի Մխիթարայ պայծառութիւն առաւել քան զառաւել։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР

U.S

3540

3426